ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԱԿՆԱՇԵՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

N 89

« 06 » Սեպտեմբերի 2011թ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ՝ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն մարզպետ

Ձեզ ենք ներկայացնում Արմավիրի մարզի Ակնաշենի գյուղական համայնքի ղեկավարի օգոստոս ամսին ընդունած որոշումները և արձակած կարգադրությունները:

Առդիր 4 թերթ:

Ակնաշենի համայնքի ղեկավար Մ.Սիսակյան

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտքագրված 8563-11
«06» 09 2011 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ԱԿՆԱՇԵՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

08. օգոստոսի 2011թ. թիվ 03 Ա

ՍԱԹԵՆԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 158, 159, 161, 169-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի սեպտեմբերի 9-ի թիվ 1231 –Ն որոշումը և Ակնաշենի գյուղապետարանի գրադարանավար Սաթենիկ Ավետիսյանի դիմումը.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1. Սաթենիկ Ավետիսյանին 2011 թվականի օգոստոսի 8-ից տրամադրել ամենամյա արձակուրդ 25 (20 նվազագույն և 5 լրացուցիչ) աշխատանքային օր տևողությամբ:
2. Սաթենիկ Ավետիսյանին աշխատանքի մեջ համարել 2011 թվականի սեպտեմբերի 12-ից:
3. Աշխատակազմի առաջատար մասնագետին՝ (Գայանե Հարությունյան) կատարել արձակուրդայինի վճարումը սահմանված կարգով:
4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

Համայնքի ղեկավար՝ Մ. Միսակյան

2011 թվական
օգոստոսի 08
գ. Ակնաշեն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ԱԿՆԱՇԵՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

16. օգոստոսի 2011թ. թիվ 04 Ա

ԽԱՉԻԿ ՀՈՎԱԿԻՄՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 158, 159, 161, 169-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի 1388 –Ն որոշմամբ և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ակնաշենի գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղարի պաշտոնի անձնագիրը և Խաչիկ Հովակիմյանի 2011 թվականի օգոստոսի 16-ի դիմումը.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ՝ ԵՄ՝

1. Աշխատակազմի քարտուղար Խաչիկ Հովակիմյանին 2011 թվականի օգոստոսի 17-ից տրամադրել 2011 թվականի ամենամյա արձակուրդ 24 աշխատանքային օր (20 նվազագույն և 4 լրացուցիչ) տևողությամբ:

2. Խաչիկ Հովակիմյանին աշխատանքի մեջ համարել 2011 թվականի սեպտեմբերի 19-ից:

3.Աշխատակազմի քարտուղարի լիազորությունները ժամանակավորապես վերապահել աշխատակազմի առաջատար մասնագետ (ծածկագիր 3. 1-2) Մարիամ Օհանյանին:

4. Աշխատակազմի առաջատար մասնագետին՝ (Գայանե Հարությունյան) կատարել արձակուրդայինի վճարումը սահմանված կարգով:

5. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

Համայնքի ղեկավար՝ Մ. Միսակյան

2011 թվական
օգոստոսի 16
գ. Ակնաշեն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ԱԿՆԱՇԵՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 . Օգոստոսի 2011թ. թիվ 07Ա

ՀԱԿՈԲ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Վարչական իրավախաղտումների վերաբերյալ օրենսգրքի 191-րդ հոդվածի առաջին մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ոստիկանության Վաղարշապատի բաժնի 2011թվականի օգոստոսի 13-ի թիվ 884 /19-9978 գրությունը՝ հրազենի պահպանելու կանոնները խախտելու համար

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Համայնքի բնակիչ Հակոբ Գրիգորի Գրիգորյանին հայտարարել նախազգուշացում:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար՝ Մ. Միսակյան

2011 թվական
օգոստոսի 17
գ. Ակնաշեն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ԱԿՆԱՇԵՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 . Օգոստոսի 2011թ. թիվ 06Ա

ՕԼՅԱ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Վարչական իրավախաղտումների վերաբերյալ օրենսգրքի 162-րդ հոդվածի երկրորդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ոստիկանության Վաղարշապատի բաժնի 2011թվականի հուլիսի 27-ի թիվ 88 14/1-9130 գրությունը, ոչ սահմանված տեղում բանջարեղենի առևտուր անելու համար.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Համայնքի բնակչուհի Օլյա Սոսի Հակոբյանին տուգանել նվազագույն աշխատավարձի՝ 1000 /մեկ հազար/ ՀՀ դրամի չափով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար՝ Մ. Միսակյան

2011 թվական
Օգոստոսի 05
գ. Ակնաշեն